



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4989-4995

1957
202.3

G-38

ՀՐԵՆՅԱՆ ԻՆՂՆՂՈՒԹՅԱՆ



Հոգի խաղաղութեան եկեղեցի առ ձեզ

Երեկոցաբարձյան Զարսեռ
ԱՂԵՐՍ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

խորհուրդ և

9242

ALBION

1910

Ն Ա Ռ Ա Գ Ի Ց Ե Լ Ի Բ

Այս աղերսիս նիւթը որչափ որ ասանկ չորս Հինգ թերթի չափ երկու էրեք աւուր մէջ պատրաստած ենք , որ մեր գրասենեակը կը փնայ . կ'ուզէինք ամէնքը մէկ հատուած մը ընելով ամբողջ հրատարակել . սակայն տպագրիչները Հինգ կամ վեց աւուր մէջ այսչափ ձեռագիր տպելը ամենադժուար ցուցունելով , բռնագատուեցանք մաս մաս բաժնելով ամեն շարթուր Հինգշարթի օրերը ձրեօբար հրատարակել յօգուտ ազգիս . նպատակ ունենալով սէր , խաղաղութիւն , արդարութիւն եւ իրաւունք : Ընթերցողք կրնան իմանալ ընտրաններու որչափ ճառելի ըլլալը եւ նիւթին ծանրութիւնը . բայց եւ այնպէս ազգիս խռովութեան օտմանակը ասանկ թերթի մը հարկաւորութեանը իմ աղքատիւութիւնս զիս բռնադատելով ո՛չ ստակ եւ ո՛չ հանգստութիւնս խնայեցի այս աղերսիս Ա . մասին շուտով հրատարակմանը համար , եւ ինչպէս որ ըսի , ստակը անձամբ վճարելով ահա ձեզի ձրի կը բաժնեմ , խնդրելով եւ աղերսելով ձեզ . որ եթէ դուք ալ զիս վարձատրել կ'ուզէք , (ինէ աւելի ազգօգուտ գործեր ընելու կարողութիւն ունեցող շատ կայ մէջէրնիդ) կ'աղաչեմ 'ի փառս խաղաղասիրին Յիսուսի Գրքիստասի ձեր մէջէն ազգակոթման խռովութիւն , ատելութիւն , անմիաբանութիւնը մէկդի ձգելով սիրոյ եւ միաբանութեան , արդարութեան եւ իրաւանց պաշտպան ըլլաք . որով մենք չէ թէ մեր այս ազնոր ձրի բաժնած կ'ըլլանք . բայց ձեր այս մեղքերը մէկդի ձգելով քրիստոնէական առաքինութիւններու մէջ գտնուելնիդ տեսնելով մեզի անվարձատրելի կերպով դո՛հ եւ շնորհակալ ըրած կ'ըլլաք որուն փոխարէն դուք ալ թէ այս անցաւոր աշխարհիս մէջ խաղաղ կեանք կրնաք անցնել եւ թէ՛ յաւիտենական աննկարագրելի փառքի՛ն արժանանալ եւ մանաւանդ միշտ մինչեւ ցկեանս եւ 'ի մահ ձեզի բարեմաղթու ըրած կ'ըլլաք :

281

ՏԻՆ

ՏԻՆ. ամբ



Գրատեղի

ԲԵՆ ԵՆՆԻՍԻԱՆ

REPERE

The following is a list of the names of the persons who have been elected to the office of Justice of the Peace for the year 1891. The names are given in the order in which they were called upon to take the oath of office at the regular meeting of the Board of Supervisors on the 10th day of January, 1891. The names of the persons who were elected are as follows: [The following text is extremely faint and largely illegible due to the quality of the scan. It appears to be a list of names and possibly their respective terms or districts.]

[The bottom portion of the page contains very faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the document.]



ԽՈՉՆԼՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ՍԷՐ ԵՎ ՄԻՈՒՆՆՈՒԹԻՒՆ
ԵՐԳԱՐՊՈՒԹԻՒՆ ԵՎ ԻՐԱՌՈՆՔ

ԿՐՕՆՔ ԼՈՒՍԱՆՈՐՉԱԿՆ

Ա Ղ Ե Ր Ս

Եւ ամենայն լուսաւորչական Հայս ,
մեծաց և փոքունց , եկեղեցականաց և
աշխարհականաց , քաղաքացւոց և գիւ-
ղացւոց , պանդխտոց և գաղթեցելոց , հա-
րստաց և երեւելեաց , աղքատաց , իմաստ-
նոց և իմաստասիրաց ևն՝ ևն՝ . զի ոչ գոյ
խտիր ի Քրիստոս Յիսուս :

Երդէն յայտնի է ձեր ամենեցուն աղ-
գերնուս մէջ բաւական ժամանակէ հետէ
եղած վրդովմունք և ալէկոծութիւնները .
սկսմունք ունենալով սուրբ Երուսաղէմայ

խնդիրը և մանաւանդ օգոս 21ի դառըն և ցաւալի և ազգակործան հետեւանքը . որուն հետեւանքներուն ծանրութիւնը որչափ որ ամէն խոհեմ և առաքինի մարդ՝ մրտաքին և դատողութեանը առջև բերելով կիժանայ ալ նէ , գլխաւորապէս ամէն օր իր կենաց վարկեաններուն ամէն մէկ կէտին մէջ ալ նոյն օրուրնէ հետէ վրդովման և և հեծածանաց նիւթ և արտասաւալի կենաց մէջ ըլլալնալ չի զլանար , որովհետեւ նոյն օրը ազգին վերք մը բացաւ այս խրոսովութիւնը , որ բժիշկներու ճարտարութեան յոյս չի ձրգելով միանգամայն առջևնիս անիրաւութեան և չարութեան փոս մը . որ ամէն օր ահամայ կիյնանք և աւելի խոր անդունդը իջնալու վրայ ենք . արդարեւ վերքը ծանր և անդունդը շատ խոր , բայց և այնպէս առանց պատճառը մտածելու և առանց ամէն մէկ անհատ իւր անձնական պարտքը չի ճանչնալով և իւր աստիճանին համեմատ չի վարվելէն ու չի գործածելէն առաջ եկած ըլլալը կրկին կրկին փորձերով ներկայիւս կը հաստատենք . որով դժուարութիւնները և խնդրոց լուծման ծանրութիւնները բաւական դիւրութեամբ ըլլալէն զատ , անշուշտ կը յուսամ որ խնդիրները լուծված , ատելութիւնը , անիրաւութիւնը խոսովու-

Թիւնք և ազգակործան ձեռնարկութիւնները և հոգւոյ և մարմնոյ միանգամայն կորուստը մերժա Աստուածսիրութիւն, ճշմարիտ քրիստոնէութիւն, եղբայրսիրութիւն, առաքինութիւն և միաբանութիւն ընդունած կրկանք :

Նախ գիտնանք սիրելի և խոհեմ ու առաքինի Հայրեր ու եղբայրներ իմ, որ մենք ունեցեր ենք այն Աստուածային շնորհքը, որ քրիստոնէական սուրբ և անարատ հաւատքի տակ և միանգամայն լուսաւորչական ուղղափառ և հարազատ կրօնքի պաշտպան ու հետեւողներ ենք . արդարև սիրելիներ անուննիս շատ մեծ ու զարհուրելի, կրօնքնիս շատ առաքինի ու արդարասէր . բայց տեսնանք ու խորին մտածենք թէ արդեօք այս Աստուածային շնորհքները ի՞նչպէս կը ճանչնանք և ի՞նչպէս կը գործածենք : Աստուածային շնորհք կրսեմ և կը պարծիմ . որովհետև հաւատքնիս ու կրօնքնիս անարատ եւ ամենամաքուր է, և ազգերնիս մասնաւոր առաքինութիւններով հազուադիւտ և բարգաւաճեալ ըլլալը խորհրդածելով սրտիս հեծեծանքները դառն եւ մահաբեր արտասուքներ կը հեղեն աչքերէս . այս ազգիս ներկայ վիճակին վրայ դիտելով խորհելով և հետեւանքներուն ծանրութիւնը մտա-

ծելով . ո՞ր քարասիրտ մարդ եւ ո՞ր ան-
հատ կամ յիմար պիտի այս ցաւը չըզգայ .
որովհետեւ ծանր ու դառն է եւ մահա-
բեր : Մեր սկզբանց հիմէն չի խոտորինք
սիրելի եւ հարազատ եղբայրներ . եւ տես-
նենք քրիստոնէութեան պատիւը ու փառ-
քը եւ ազգութեան իրաւունքը ինչպէս կը
գործածենք , ՚ի Քրիստոս պարծող քրիս-
տոնեաներ եւ սուրբ քրիստոնէի անունը
եւ դրօշմը ունեցող ընկերներ իմ . ի՞նչ-
պէս եւ ի՞նչ կերպով արդեօք կը գործա-
ծենք մեր պարտականութիւնները . յիշե-
ցէ՛ք եւ խորհեցէք , սակայն կ'աղաչեմ վեր-
ջին աստիճան գիտողութեամբ եւ ուժգ-
նութեամբ . արդեօք այս կերպով վարուելով
Քրիստոսի հետեւող ըլլալու անուան փառ-
քը մեզ չի՞ պիտի պատժէ ու նախատէ :
Մտածենք եւ քննենք մեր խղճմտանքը ու
սիրտը . որչափ արդեօք քրիստոնէի մը
պարտականութենէն շատ հեռու եւ մո-
լորութեան անդունդին բերանը հասած
ըլլալնիս պիտի տեսնենք : Քրիստոս Շատ-
ուած ահաւոր Տէր երկնի եւ երկրի արա-
րիչ , ստեղծող բարեաց եւ Տէր տերանց
իւր այնչափ մեծութեամբը ու անիմանա-
լի գոյութեամբը աշխարհ կուգայ և միան-
գամայն Մտուածահրաշ շնորհքներով
մեզ սատանայական գերութիւնէ կազա-

տէ , առամային սկզբնական մեղքը կը ջընջէ եւ դժոխոյ անվախճան ու անվերջանալի հուրը եւ տանջանքը իւր չարչարանքներուն շնորհիւր կ'ոչնչացընէ . կ'աղատէ իւր հետեւող անունը ունենալու արժանի եղող Աստուածային շնորհքին ծառայողները և ցանկացողները . մարդիկ եւ արարեալք Աստուծոյ , ի՞նչ բարձր խնդիրի մէջ ենք գիտէք , գիտէք արդեօք որչափ խորին մտածութիւն պէտք է հիմայ , ձեզի չեմ յիշեր մեծն Աղեքսանդր ասաւոր թագաւորը եւ կամ Նաիրոյէոն առաջին գաղղիոյ զօրեղ կայսրը , ես ձեզի տէր տերանց եւ թագաւոր թագաւորաց անճառելի Քրիստոսի երկրպագելի անունը կուտամ . ասա այս ամենաերկրպագելի Աստուածը մեր սիրոյ ու փրկութեանը համար աշխարհք եկաւ . անիմանալի զօրութեամբ մարմնացաւ . աննկարագրելի հրաշագործութիւններ ըրաւ Աստուածային փառքի արժանի . վերջապէս ամբաստանուեցաւ , մատնեցաւ , դատապարտեցաւ եւ մահապարտացաւ . իւր մեծութեանը առջին ամենաչնչին եղող չար ծառայներէն , վերջապէս ինքն ամենամեծ Աստուած և մարդկատարեալ խաչեցաւ իբրեւ ոչխար ՚ի սպանդ և զինաւ մահուամբ իբրեւ գառն անմեղ . և իւր երկրպագելի սուրբ և անճառելի արիւնը

մեզի համար. մարդիք մեզի համար թափեց.
և իւր երկրպագելի արեամբը գնեց այս հօ-
տը. իւր ամենասուրբ մարմինը՝ ի յիշատակ
քրիստոնէութեան և ի յիշատակ անիմա-
նալի մարդասիրութեան բաշխեց մեզի,
արդեօք ի՛նչպէս չի սարսափիմ ու չի դո-
ղամ հիմա Քրիստոսի անունը իմ վրայ
ունենալուս. ի՛նչ խորին մտածութեան
նիւթ և ի՛նչ սարսափելի խնդիր, մենք հի-
մայ քրիստոնեայ ենք. մենք առանկ Քր-
քիստոսի մը եւ Աստուծոյ մը հետեւողներ
ենք. որչափ ամենադժուար խնդիր և որ-
չափ անիմանալի պարագաներ, տէր տէ-
րանց և Աստուած Աստուծոյ մեզ սիրելուն
համար արիւն թափէ և մեռնի, մենք որ
անիկայ պաշտօղներն ենք ձրի բարեւ մ՛ալ
չենք տար իրարու. հիմա մենք քրիստոն-
եայ ենք. որչափ դժուարին ու անհաւա-
տալի խնդիր, մեզի համար որ Քրիստոս
Աստուած չարչարանքներ տառապանքներ
վիշտեր ու ցաւեր կրեց. մենք հիմայ մարմ-
նաւոր հանգստութիւննիս անգամ չենք
ուզեր աւրել. չէ թէ իրարու համար, այլ
ազգին ամբողջութեանը համար. բայց և
այսպէս նոյն քրիստոսի աշակերտներն ենք
կրսենք. հաւատանք հիմայ արդեօք եղ-
բայրներ. Քրիստոս և ամենակարող Աստ-
ուած որ ինքն էր աշխարհի ամեն մէկ

փառքը և հարստութիւնները , ճոխութիւնները ստեղծողը . բոլորը կ'ատէ, կանարգէ և անոնք յարգողներուն վայ կուտայ ուրիշը աղքատութեամբ կապրի . արդ, մենք հիմա անոր հետեւողներն ենք , որ զերար կրմատնենք՝ աշխարհքի մէջ անցաւոր փառքի համար . զերար կ'ատենք ամենաչնչին շահու համար , զերար կը նախատենք հողեղէն անձերնու համար . հիմայ մենք քրքիստոնեայ և Քրիստոսի հետեւող անձեր կը գոչենք զմեզ . հաւատանք գիտնանք որ այս գործերովն իս քրիստոնեայ չենք կրնար ըլլալ , թէ որ “ հաւատք առանց գործոց մեռեալ է ” վճիռը չի մոռնանք : Ուրեմն մենք ալ միջոցներով և գործերով Քրիստոսի փառքը վայելելէ ու անունը ունենալէ զրկուած պիտի ըլլամք . այն Քրիստոս Աստուածը որ 'ի մարդասիրութիւն մեզի համար չարչարեցաւ խաչեցաւ դառն մահուամբ մեռաւ , որ երկինք ու երկիր սարսեցուց , մեր սիրոյն համար . ահա ձեզի հաստատեմ , որ ի՛նչպէս ժառանգորդ կրնանք ըլլալ . մենք որ զերար կ'ատենք , կը նզովենք , կը հայհոյենք ու կը նախատենք առանց նիւթը և պատճառը գիտնալու , լուսաւորեալ , խաւարեալ կամ յիմարացեալ իմաստացեալ անտեղի ու անվայել ածականներով ու բառերով . ահա մեր քր-

ըրիստոնէավայել գործերը: Քրիստոս Աստուած իւր ամենասուրբ բերանովը . եղբայր ու զաւակ կը գոչէ զմեզ . մենք այժմ իրարու ինչեր կը գոչենք , և ինչ պատուանուններ կուտանք իրարու . որոնց մէկ գիրը անգամ չեմ ուզեր ազգասիրական գրուածոյս մէջը յիշել . նոյն Քրիստոս Աստուածը մեզի սէր , միաբանութիւն , եղբայրսիրութիւն և հաւասարութիւն կը քարոզէ . բայց մենք ընդհակառակն երբէք իրար սիրելով երկուքնիս կամ երեքնիս մէկտեղ ժողովուիլ և առաքինասէր գործերու ձեռնամուխ ըլլալ չենք ուզեր . և միանգամայն զմեզ Աստուածային հրամանին հնազանդ կը ճանչնանք : Աստուած ամենաբարին իւր ամենամաքուր բերնովը մեզի կ'օրհնէ ու կը պատուիրէ ու կըսէ , “ սիրեցէք զթշնամիս ձեր , բարի արարէք ատելեաց ձերոց , օրհնեցէք զանիծիչս ձեր” . մենք այս հրամանին փոխարէն ինչ կընենք , զի՞տէք մա'րդիկ . մեր բարերարներուն մեր մեծերուն և երախտազէտներուն ազնուութիւնը , ամիրայութիւնը ու հարստութիւնը 'ի բարին չկրնալնուս գործածել կատենք : Անե՞ք կը կարդանք մեզ գովող ու օրհնող եկեղեցականներուն ու կը նախատենք անոնց մարդ ըլլալը մոռնալով , և կատարեալ գերբնական գոր-

ծաղրութիւններ սպասելով , մեր թշնամիները կատենք ու կը նախատենք փոխանակ սիրելու . և երանի թէ ճշմարիտ և իրաւացի թշնամիներնիս ըլլային , որովհետեւ շատերը ուրիշներու ամբաստանութեամբ թշնամի ճանչցուած և ուրիշներու սխալ մեկնութիւններովը թշնամացած են , ահա ձեզն Քրիստոսի վճիռը և իրեն իբրև հետևող պարծող քրիստոնէից գործերը . արդեօք որ աստուածաբան այս խընդիրներուն լուծմանը կրնայ պատասխան տալ . Քրիստոս Աստուած աշխարհի մէջ ժամանակ անցուց աղքատներուն ու տրկարներուն օգնելով ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ և զանոնք կերակրեց ու մսիթարեց . դուք որ անոր յաջորդներն ըլլալու շնորհքը ունիք և անոր հրամանացը կատարմանը փափաքող կը ձեւանաք . ինչ կրնէք գիտէք . ազգին որք անտերունջ աղքատ և խղճալի տնանկները վերջին սատիճան թշուառութեանց մէջ ձգելով ու միանգամայն ազգին նախկին բարեբար Պեղճեան լուսահոգի հանգուցեալ Յարութիւն ամիրային արդեամբը շինուած ու կառուցած ազգային հիւանդանոցը անգամ թշուառութեամբ կործանելու կը ջանաք . արդարև ազատ եք ամեն բան ընելու . բայց յիշեցէք Աստուծոյ զարհու-

րելի դատաստանին պատասխանատուութիւնը և յաւիտենականութիւնը, ամէն բան ընելու ազատ էք, բայց մտածեցէք որ դուք ալ ասանկ ազգասիրական բարեգործութիւններ բրած ըլլաք և ձեր յաջորդները զանոնք բարգաւաճելու տեղ թէ որ ջնջեն և կործանեն, ինչպէս կը վարձատրէք անոնք. և ո՞ր առաքինի կրնայ քաջալերուիլ այս պարագայներէս ետքը բարիք գործելու՝ կործանման երկիւղը սրտին մէջը եղած ժամանակը, որով դուք ոչ թէ բարերարներու յիշատակը անարգած կ'ըլլաք, այլ հապա սպառնալիք մը. յիշեցէք որ եթէ նոյն հանգուցեալ ամիրան, որուն առաքինութիւններուն օտար ազգերը անգամ ջատագով են, արդեօք աչքը բանալով գերեզմանէն դուրս ելլէր եթէ արդեօք մեզի «օրհնեալ ըլլաք» մի պիտի ըսեր, արդեօք մեզի համար անէծք ու նզովքներ չպիտի կարդար. որուն ազգեցողութիւնը մեր իրարու բրած անիրաւ անէծքներուն չի նըմանելով Աստուծոյ արդարութեանը դատախազ պիտի ըլլար մեզի և մեր զաւկներուն ու բոլոր սերունդներնուս: Գանք կրօնաւորի մը անցքը պատմելու. այս կրօնաւորը իւր ալիական ծերունի և պատկառելի հասակին մեջ առանց շահու և

արհեստի մեծցած, իւր հայրական օրհնութիւններովը ազգէն շտտ քիչ ապրուստ գտած, Սրբազան եպիսկոպոս մը որ իր անձին չի ներած աշխատութիւնները և ծանր մտածմունքները ու հոգերը վրան առած, խոնարհելով իւր կրօնաւորութեանը և հասակին չնայելով անդադար աշխատած. իւր ստակը չը բաւելէն ազգին բարերարութիւնը ներու փափաքող անձերէն ստակ հաւաքած և գեղեցիկ ու հաստատ քարուկիր դպրոց մը շինողը նոյն Յակոբ պատրիարքն է, որ մենէ ասոնց փոխարէն նախատինք և արհամարհանք և միանգամայն թունաւոր և վշտալի յարձակումներ կընդունի. ահա մենք այն քրիստոնեայներն ենք որ մեր բարերարները առանց աստիճանի և հասակի խտրութեան՝ կ'ատենք ու կը նախատենք. յիշելու արժանի մաս մը կայ որ շատերուն բերնէն ունկնդիր եմ եղած, «եղբայր անդին ճեմարանը կը փլչի և գրեթէ պարապ կեցած է. ի՞նչ խելք է այս մարդուն այսչափ ստակ վատնելը սէլամսըզի պէս քիչ ժողովուրդ ունեցող թաղի մը մէջ». եղբայրներ ու տեարք իմ. գուր որ սէլամսըզի շրջակայներուն մէջ քսան քրսան և հինգի չափ գինետուն և տասը տասնը հինգի չափ սրճատուն ունենալէն չէք ձանձրանար, ինչու այս եպիսկոպոսին

առաքինութիւնը չաչարար կը բամբաստէք մէկ դպրոց մը շինչուն համար . դուն քու պարտքդ ճանչնալու յանցանքը ինչունոյն ծերունի եպիսկոպոսին կը վերաբերես . դուն ալ աղբ ես և աղբին պարտականութիւն ունեցող անհատ մը, ձեր մէջը չիկայ արդեօք ճեմարանը առանցին իր քսակէն հոչալու կարողութիւն ունեցող անձեր , բայց ինչու համար պարսպ տեղը ձեր շրուայութենէ ստակ աւելցրնէք և բարեգործութեան գործածէք . դուք որ երեւելի ու գեղեցիկ տուներ , ամարանոցներ և ձմերանոցներ . ահագին աղարակներ , գեղեցիկ պարտէզներ ու զուարճալի այգիներ ունենալու կարողութիւն ունիք և օր աւուր աւելցրնելու վրայէք . արդեօք հոգիներնուդ փրկութեանը օգնութիւն բնող շինուածներու ձեռնամուխ ըլլալու կարողութիւն չունիք մի , դուք ձեր քրիստոնէավայել պարտքը և Աստուածային պաշտամունքները չէք ճանչնար յետ , ինչու ուրիշ բարեգործութեանը արդէլք կըլլաք , և այն ժամանակը չէք մի մեղանշած ըլլար Աստուծոյ իրաւանցը և հետեւաբար արժանի այն նախատիները , լսելու “որ ոչ մտանեն եւ որ մտանելոցն են արգելուն” . այն մարդը ձենէ բռնի ստակ չուզեց , ձենէ խնդրեց և աղերսեց , ոչ թէ 'ի վառս իւր

խնդրելով այլ ՚ի փառս Քրիստոսի : Աւ
զուք որ տուած ստակնիդ ինչու և որի հա-
մար տուած ըլլալնիդ չեք գիտեր, ինչո՞ւ
նոյն եպիսկոպոսորան իրաւութեամբ կրբամ
բասէք . այս այն եպիսկոպոսն է, ՚ր քանի
քանի անգամ դուռները ու փողոցները
պօռչտելով ահամայ պատրիարք բերք, ո՞վ
սիրելիներ . առջի օրը ո՛վս մննայ, երկրորդ
օրը ՚ի խաչ հան զգա պօռայող անիրաւ
հրեաներուն պատիժը կուզէք Աստուծմէ
և բաժինը անիրաւութեան . կատարեալ
քրիստոնեայ մը իր գործերուն մէջ հաս-
տատ ըլլալու է և ոչ թէ փոփոխական և
խաբեբայ, որովհետև սատանայի կը վերա-
բ'րին այս յատկութիւնն'րը . մե'ք քրիս-
տոնէավայել գործերուն մէջ փոփոխական
և յիմարական կերպով վարուելովնիս՝ հաս-
տատ գիտցէք որ յիմար կուսանաց անպատ-
ուութեանը կարժանանանք . և աղէկ խիղ-
ճերնուդ հարցուցէք, մեր բռնած ընթաց-
քը յիմար կուսանքներէն գովելի տեղ մը
ո՞նի մի . և այս բոլոր գրաճներս հաստատ
գիտեմ որ լոկ և պարզ ազդասիրութենէ
մը յառաջ եկած է և ոչ թէ ճշմարիտ քր-
քիստոնէութենէ . որովհետև խիղճս զես
հանապազ կը տանջէ՝ ճշմարիտ քրիստո-
նէի մը ընթացքին մէջ չըլլալս իմացընե-
լով . արդարև Աստուծոյ անսահման ներո-

զամտութիւնը և մարդասիրութիւնը փոքր
ինչ ճանչցած ըլլալովս, սակաւ ինչ յոյս
կուտայ որ մեր մոլութիւններէն օր մը պի-
տի զզջանք, ու գոռոզութիւն, կիրք և ամ-
բարտաւանութիւնը մէկզի ձգելով մեր
երջանիկ նպատակին մերձենալու փառքը
պիտի ունենանք : Աղբայրներ, մեր մէջը
այս դժոխային գոռոզութիւնները եղած
ժամանակը ի՞նչպէս կրնանք Քրիստոսի
ճամբուն մէջ ըլլալ կարծել, որ մեր Տէրը իր
անկշռելի մեծութիւնը մէկզի թողելով
մանկանց խոնարհութեան անգամ զիջա-
նելով անմեղ մանկունքները իւր երկր-
պագելի գիրկը կ'առնէր և իբրև գառն ա-
նարատ կը սիրէր . և միանգամայն « մեծ
կոչեսցի յարքայութեան երկնից » ըսելու
ալ արժանի ըրաւ . ուրեմն պաշտականու-
թիւն չէ՞ մեղինոյն ամենազովելի ընթաց-
քին մէջ գտնուիլ և մենէ պզտիկները սի-
րել ու գրգուել . սակայն չափահասներ և
ծերեր, ձեր մէջը Քրիստոսի մանկունքնե-
րը սիրելու սէրէն փոշի մը անգամ չըլա-
լէն զատ տարիքով ձենէ պզտիկ եղողները
Ռահել ճե-հե-ւ և աւելի ևս դաժանական և
բարբարոսական խօսքերով կը վիրաւորէք .
որ այն խօսքերուն ամենը հոս յիշելը ինձ
անպառուտութիւն կը համարեմ : Չե՞ք յի-
շեր որ այն երիտասարդները որ կ'ատէք

ձեր յաջորդները ու միանգամայն ժառանգորդներն են . չե՞ք մտածեր որ անոնք ձեռնէ եղած են և ոչ թէ դուք անոնցմէ . և անոնք որ ձենէ եղած են ձեր պտուղները սեպուելով « ծառ բարի պտուղ բարի առնէ և ծառ չար պտուղ չար առնէ » ըսելով, կարծեմ կրնամ հաստատել որ անոնց տրուած նախատանքնիդ ձեզի կը վերաբերի անշուշտ . թէ որ դուք բարի էք , ձեր պտուղներուն ի՞նչու չար կըսէք . և թէ որ չար էք ի՞նչու համար ձեր չարութիւնը և աչքերնուդ մէջի եղած գերանը չնայելով ձենէ պղտիկներուն մազի չափ պակսութիւնները իրենց երեսը կուտաք : Աւ անոնք ալ այս կերպով վերաւորելով իրենց հնազանդութիւնը կը պակսեցընեն՝ որով ձեր պատիւը կը պղտիկնայ . որով ոչ երբէք դուք Աստուծոյ առջին պատասխանատուութենէ կազատիք և ոչ անոնց ալ կը ձգէք իրենց պարտականութեան ահամայն անգործադիր ըլլալնուն պատիժը կրելու . ձեր երիտասարդ եղած ժամանակը , ձեր երիտասարդութիւնը ձեզի արատ սեպողներէն թէ որ գոհ կըլլայիք , դուք ալ հիմակուան երիտասարդներուն արատը իրենց երեսը տուէք . որովհետեւ Աստուծոյ ամենասարդար կշռոյն չափը և համեմատութիւնը ժամանակին ձեզի ըստ պատ


չաճոյն իմացուցած է, ըսելով թէ “որպէս
կամիք զի արասցեն ձեզ մարդիկ, նոյնպէս
արասջիք և գուր նոցա”, և թէ որ մինակ
հրամայել առանց անձամբ բարի օրինակ
բլալու կուղէք, և կամ խրատել առանց
խրատ մտիկ ընելու այն ժամանակը ձեզի
փարիսեցիներուն և մաքսաւորներուն պա-
տիւր կուտայ Մատուած . ըսելով թէ “ա-
սեն և ոչ առնեն, խոստանան և ոչ կատա-
րեն” :

Ուստի մենք որ զեռ քան զամենայն
կենդանի և բանական կենդանի ստեղծ-
ուած ենք, պատարիչ գաղաններուն չըրա-
ծը արդեօք կրնա՞նք մի ընել . որովհետեւ
անոնց մէջ անգամ հազուադիւտ է իր
ձաղերը չը սիրողը և իր մանրերը ասողը .
կը խնդրեմ ներողամիտ եղէք ընթերցող-
ներ այս մասին . երիտասարդներուն ջերմ
պաշտպան ըլլալս գիտնալով, որ ճշմարիտը
քրիստոնէաւայել պարտականութիւն մըն
է, և ոչ թէ անձամբ ինչպէս երիտասարդ
գտնուելովս նոյն վիճակին պաշտպան և
ջատաղով գտնուելու փափաքով . ուստի
կը խնդրեմ և կաղաչեմ որ սիրեք երիտա-
սարդները սուրբ սրտիւ գգուելով և ա-
նարատ համբոյրով անոնց ճակատները
պաղնելով . որոնց ճակատն ալ ձեզի խո-
նարհելով ձեր պատկաւելի ձեռքը համ-

բուրեն և խոնարհին իբրև հարազատ զա-
ւակ . ասով ունենաք դուք ապագային ճշ-
մարիտ առաքինի յաջորդներ և մանաւանդ
աշխատասէր ուշիմ և խոհեմ ըլլալու փա-
փաբող և ոչ թէ ընդ հակառակն յան-
դուգն եւ լիբր և ձեր հայրական խնամքը
ատող իբրև որդի անառակ . և թէ որ , մե-
ծեր ու ծերեր , ձեր այս պարտականու-
թիւնը չարաչար գործածէք և չը ջանաք
մեր խնդրանացը համեմատ վարուիլ , ա-
նոնք ակամայ կը կորսուին և անոնց արեան
գինը ձենէ կը պահանջուի . սա ալ ձեզի
յիշեմ որ , ինչ կալուածներու տէր և ո՛ր
շահախնդիր մարդ իր բարեժառանգ յա-
ջորդը կ'ատէ որմէ ուրիշ բարի միջոցնե-
րով կրնայ նպաստ և իրեն ծերութեան
ժամանակ օգնական ունենալ :

Երիտասարդներ , դեռահասակներ , և
պատանեակներ , մենք ալ ջանանք մեր ա-
ռաքինի պարտականութիւնները լիովին
կատարել մեր մեծերուն , իրենց վարքին
համեմատ վարուելնին տեսած ժամանակ-
նիս . որովհետև ամենաբարին Աստուած՝
որ միանգամայն ազբիւր լուսոյ և ճշմար-
տութեան է և պաշտպան արդարութեան
և իրաւանց և հաւասարութեան , միան-
գամայն դասք հրեշտակաց և հրեշտակա-
պետներ ունի . ըսել է որ Աստուած ան-

173
40



զամ խումբի մը կամ բաղմութեան մը մեծ կամ գլուխ ունենալը արժան և իրաւ վճռեց , հրեշտակապեաներ կարգելով . Աստուած իսրայելացւոց ժողովուրդին իւր հրամանները հաղորդել ուզեց . անոնց մեծ կարգեց մարդարէն Մովսէս և անով թէ իր ժողովուրդը փրկեց և թէ ժողովուրդը անոր ձեռքովը երջանկութեան դիմեց : Աստուած որ մեծը ու սղտիկը հաւասարապէս կը սիրէ . բայց և այնպէս մեծին պէտքը և հարկաւորութիւնը ճանչցաւ . մենք որ Աստուծոյ ամենաոչինչ ծառաներն ենք , Աստուծոյ որոշածը և ընտրածը պաշտենք . որուն մինակ միջոցը այս մասին մեր մեծերը և նախնիքը յարգելով կրլայ . արդարեւ մեր մէջն ալ կան անանկներ , բայց ասիկայ ընդհանուրին չի վերաբերիր , փասն զի շատերը կատարեալ կրթութութեան և իմաստութեան փափաքող են : Բայց ասանկները որ ինքզինքնին լուսաւորեալ կը կոչեն և կը պարծին , ի՞նչպէս անոնք առաջիններուն հաւասար սեպեմ , երբոր իրենց մեծերուն հետ հապանդութեամբ վարուիլը անզամ չեն գիտեր : Մովսիսական օրէնքը և Քրիստոսի հրամանները որ ինքնին լուսաւորեալ են . կարդացէք , ի՞նչ կրսէն արդեօք “պառուեա զհայր քո և զմայր և “սիրեսցես

զընկեր քո իբրև զանձն քո” : Արեմն այս
Մատուածային հրամանները չարհամար-
հելու համար պատուէ և կրկին պատուէ
և հնազանդ եղիք քու ծնողացդ , քու
նախնեացդ և քու մեծերուդ : Եւ թէ որ
ասոնք կատարելով կուզես կատարեալ լու-
սաւորեալ ըլլալ , այս լուսաւորութեան
գրամազլուխը Մատուծմէ ինդրէ և ան-
շուշտ կը գտնաս . որովհետև հաստատ
գիտենք որ “ սկիզբն իմաստութեան
երկիւղ տեառն” է . մի պարծիք ձեր
ջնջին ուսումնականութեանը վերայ ,
որովհետև Փարիզի . Ընդգիոյ և եւ-
րոպիոյ համալսարաններուն մէջի ուսում-
նականները ի՞նչ ընեն . մի՛ պարծիք ձեր
լեզուագիտութեանը վրայ , որովհետև կը
յուսամ կարդացած էք քսան երեսուն լե-
զու գիտցող լեզուագէտներուն պատմու-
թիւնը , անոնք ինչո՞վ պարծին , մէկ լեզ-
ուագէտ մը թէ որ առաքինի կրթեալ և
խոհեմ չըլլայ , գիտե՞ս ինչի կրնամանի , կը-
նամանի այն անձոունի նուագարանին , որ յի-
րաւի շատ ձայն կը հանէ , բայց ճարտա-
րութիւնը լարը քսողին քո՞վն է , ինտոր
ուզէ անանկ ձայն հանել կուտայ : Մենք
մեր նուագարանին լարը սատանային և
գոռոպութեան չաստուածին ձեռքը չի-
տանք որ իւր կամքին համեմատ գործա-

ծէ . հապա ճշմարիտ քրիստոնեայ-
ներու և առաքինիներու տանք , որոնց լա-
րէն Մատուածահաճոյ ձայն ելլայ ու երգ
առ բարձրեալն Մատուած , որով աւելի
քաջալերուելով ճշմարիտ լուսաւորեալներ
և արդարութեան հետեւողներ ըլլալով
միանգամայն ազգին լուսաւորութեան և
յառաջադիմութեան մասնակից ըլլալու
պատիւը ունենանք : Հիմայ որ թէ՛ ծերե-
բբ և թէ մեծերը իրենց հայրական պար-
տականութիւնը չենճանչնար , եթէ մենք
մեր հնազանդութեանը չենք գործադիր
ըլլար , ի՞նչպէս կրնանք ըսել թէ քրիս-
տոնէավայել գործի մէջ ենք և թէ Քրիս-
տոսի հետեւող : Քիտե՞ք սիրելիներ . մեր
տէրըմեզի ինչ պատուիրեց “ուսարուք յի-
նեն զի հեզ եմ և խոնարհ սրտիւ” . մենք
որ զմեզ Քրիստոսի հետեւող կը կոչենք
գի՞տէք ինչ կրնենք . մենէ պզտիկին կամ
վար աստիճանի մարդուն բարեւելու ժա-
մանակնիս հողէ գոյացած ձեռքերնիս և
ամենատկար բազուկնիս , դիմացիմարդեր-
նուս աստիճանէն վեր ըլլալուն կը փափա-
քինք , ահա քրիստոնէավայել գործ : Ե-
րեւելի և հարստութեամբ ճոխացեալ ա-
միրաներ , ձեր սիրտը Քրիստոսի սիրովը
լեցուցէք , այն սէրը ձերաշխարհային գան-
ձերուն որ Բասաներո՞ւ մէջ կը պահէք . ա-

նոնց չի նմանիր, անոնցմով մինակ մարմնաւոր հաճոյքնիդ կրնաք զիջեցընել, և այն ալ ժամանակաւոր կերպով. բայց թէ որ Քրիստոսի ճշմարիտ սէրը ունենաք. այն ատեն ամեն բան կը բաւականանայ ձեզի և անանկ գոհ կըլլաք. որով աշխարհի մէջ հանդիստ կեանք և յաւիտենականութեան մէջ երջանկութեան կառաջնորդէ մեզ. և նոյն սէրը պատրաստ է մեզ միշտ Քրիստոսի անդառնալի վճռովը յաւիտենական երջանկութեան հասցնելու. ահա իւր մարդասիրական և երկրպագելի վճիռները.

“Նրանի աղքատաց հոգով, զի նոցա է է արքայութիւն երկնից”

“Նրանի սգաւորաց, զի նոքա մխիթարեացին”

“Նրանի հեզոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր”

“Նրանի որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան զի նոքա յագեսցին”

“Նրանի ողորմածաց՝ զի նոքա ողորմութիւն գտցեն”

“Նրանի այնոցիկ որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն”.

“Նրանի խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին”.

(Այս վճիռը մեծ խորհելու նիւթ է այս

միջոցիս , և մանաւանդ ազգին այն մասին՝ որ ազգին խաղաղութիւնը խռովութեան փոխելով իրեն յօժար կամքովը կը զրկուի խաղաղասէրներուն որդի Աստուծոյ կոչուելու փառքէն , վայ մեզի և կրկին վայ . ողբալի և դառն վիճակ . մեր ժամանակաւոր և անցաւոր որ և իցէ կիրքերը յառաջ տանելու համար , որդի Աստուծոյ կոչուելու փառքէն կը զրկուինք . ափսոս և աւաղ . . .)

“ Արանի որ հալածեալ իցեն վասն արդարութեան , զինոցա է արքայութիւն երկնից ” .

“ Արանի է ձեզ , յորժամ նախատիցեն զձեզ և հալածեսցեն և ասիցեն զամենայն քան չար զձենց սուտ վասն իմ . ցնծացէք և ուրախ լերուք . զի վարձք ձեր բազում են յերկինս . զի այսպէս հալածեցին զմարգարէս որ յառաջ քան զձեզ էին ” :

Ահա լուծեց Աստուծոյ վճիռը ամեն մեր խնդիրները . մերժեց մեր ամենմոլութիւնները . օգնեց ամեն դժուարութիւնները դիւրութեամբ լմնցընելու . և ոչ թէ Արուստոյ պատրիարքը դնելու և կամ “ Վօլսոյ պատրիարքը իջեցնելու խնդիրները դժուարացուց , այլ հասպա փոխանակ սոցա երկրի աթուին վրայ փոխանորդ կամ

պատրիարք կանգնեցընելու Չանքէն ու պարտականութենէն հազար անգամ աւելի մեր ամեն մէկը կարող ըրաւ տանիչ և բազմեցընել արքայութեան յաւիտենական աթոռներուն վրայ . և դասակիցընել այն ամեն առաքելոց, հայրապետաց, սրբոց և մարտիրոսաց դասին հետ, որոնք ոչ մարմին և ոչ արիւն խնայեցին նոյն փառքին արժանանալու . զորս միայն վերոյգրեալ Մատուածային վճիռներով պիտի կարենանք ստանալ :

Ուրեմն եկայ ձեզի հարցնելու . որուն պատասխանը պատրիարքին հրաժարականը ընդունելու սպասելուն պէս չեմ ըստպասեր, այլ ստիպմամբ կը հարցունեմ որ եթէ քրիստոնեայ ենք քրիստոնէութեան յարզը ճանչնալով նոյն ընթացքին մէջ չըլանք նէ, ի՞նչպէս Քրիստոսի պիտի պատասխանենք զարհուրելի և անաչառ դատաստանի ժամանակ . ասոր պատասխան բաւական լութենէ ետքը եթէ ապաշխարենք, լանք և ողբանք մեր ժամանական և վտանգաւոր մեղքերուն համար . և քրիստոնէավայել գործքերու մէջ զըտնուինք, նոյն ժամանակ Մատուած ամենաբարին իւր անբաւներողամաութեամբը մեզի ներելով կրկին իւր անարատ սուրբ եկեղեցւոյ ծոցը կ'ընդունի . ուստի

գանք մեկտէղ 'ի սէր և 'ի հոգի միաւո-
րելով առ Աստուած բարեմաղթենք որպէս
զի այս ատելութեան կործանիչ ժանտախ-
տը մեր մէջէն վերցունելու շնորհք և ո-
ղորմութիւնը տալով առաքինի Աստուա-
ծապաշտ և կատարեալ քրիստոնեայ ըլա-
լով առ Աստուած դիմենք 'ի փառս և 'ի պա-
տիւ ահաւոր մեծութեան Վրիստոսի և
ամենասուրբ չարչարանաց Տեառն մերոյ .
վասն զի այս ընթացքով Սողոմոնացիք և
Վոմորացիք մենէ աւելի բան մը չ'ըրին ,
կարելի է պակաս ալ ըրին . ահա մենք
կուտենք ազահութեամբ , կը խմենք ան-
յագ , կը զուարճանանք շոայլութեամբ ,
կը վատնենք զեղիսութեամբ , մոռնալով որ
Աստուած պիտի հարցընէ . 'և մանաւանդ
սա վճիռն ալ ունինք և չի մոռնանք , “ ո-
րում շատ տուաւ շատխնդրեսցի 'ի նմանէ ,
և որում սակաւ՝ սակաւ ” . գիտէ՞ք այս
Սողոմոնացւոց և Վոմորացւոց մոլութիւննե-
րէն զատ աւելի ևս փառաւոր տմարդու-
թիւններ ունինք . ի՞նչ . — Մատնութիւն ,
ամբաստանութիւն , հայրենատեաց և մա-
նաւանդ ամենէն վտանգաւոր ազգատեաց
անմիաբանութիւն : Շատ աղէկ . ասոնք
ունինք . գոնէ աս մոլութիւններուն սլառ-
ճառաւ Աստուած մեր վրայ կրակ ու քար
չի թափելուն համար՝ շաբաթը անգամ մը

Տողևոյ վաստակը քան զմարմնոյն գերա-
դասելով եկեղեցի երթանք : Ա՛չ , չ'ենք
երթար . որովհետև մեր ամեն մարմնաւոր
պիտոյքները կատարեալ եղած կրկարծենք .
բայց՝ ան ալ այնպէս չ'ըլլալը Պօլսոյ բնա-
կիչները քաջ գիտցած ըլլալու են . որով-
հետև ազգ մը՝ որ վաճառականութիւն ,
երկրագործութիւն , մեքենագործութիւն ,
են" , կեն" , չ'ունի , հարուստ և իր մարմնա-
ւոր պիտոյքը կատարեալ հոգացած չի կրը-
նար ըլլալ : Մենք՝ որ ասոնք ալ չ'ունինք
գոնէ ի՞նչու մեր հոգևոր պարտականու-
թիւնները չենք կատարեր , և եկեղեցին
որ միանգամայն Տուն Աստուծոյ , մեղա-
ւորաց քաւարան , սգաւորաց մխիթարան .
սրբոց բնակարան , տեղի Աստուծոյ և կա-
յարան աստուածային անհեղ աթոռոյն |է ,
ի՞նչու արտօրնոր չ'ենք դիմեր : Ա՛ թերա-
հաւատք , մենք որ աշխարհիս մեջ թէ՛ատ-
րօն մը և կամ անցաւոր տեսարան մը ըս-
տակովսիս երթալը մեծ ուրախութիւն կը
համարենք անձերնուս , ի՞նչու համար
արդեօք Աստուծոյ տունը չի վազենք . որն
որ ձրիաբար , անխտիր ամեն աստիճանի
մարդոց բարիք կը շնորհէ առանց չափու
և հասակի նկատելու : Մոռցեր ենք արդ-
եօք Ալօլթերի , Աէօնի , Նեստորի , կեն .
կեն . մահերուն ինչպէս ըլլալը , ի՞նչպէս

չարաչար խղճմտանքի սուրով սաստիկ զարնուած տառապանօք մեռան } որոնց
գրիչը ու հանճարը մերինին պէս չըլլա-
լուն անկասկած ենք . այս մէկդի՞ ձգենք ,
գանք տեսնել թագաւորներու ահագին և
զարհուրելի շիրիմները , որոնք լեցուն են այն
փափուկ եւ միանգամայն զարհուրելի վե-
հապետաց ոսկորներով , և ընկերացած ա-
մենաչնչին ճճիներու և որդերու կոյտերու
հետ որոց կենդանութեան ժամանակը հե-
ռուանց իրենց երեսը անգամ՝ նայելը ահ-
ռելի էր : Արդեօք աղքատ հովուի մը գե-
րեզմանին ոչնչութիւնը թագաւորաց գե-
րեզմաններուն շքեղութենէն քանի որմահը
չիղատեց , մենք ի՞նչպէս կրնանք զատել
մեր յիմարական խելքովը Աստուծոյ ա-
րարածները իրարմէ չնչին և ոչինչ , փուճ
և ունայն ժամանակաւոր հարստութեան
մը համար . ասոնք ամէնքը մեր հիւանդու-
թեան սաստկութիւնը կը պատմեն . բայց՝
ո՛չ երբէք ասոնցմէ վհատելով թմրինք ու
մնանք , այլ հապա Քրիստոսի անչափելի
մարդասիրութեանը դիմենք . որն որ ան-
ճառելի է՝ ի մարդկանէ . և մեր հոգին՝ զոր
մոլութեան ախտերով հիւանդացուցած
ենք , երթանք մեր ամենաբարձրեալ Տի-
րօջը կենսատու բժշկապետին Յիսուսի
Քրիստոսի ամենաերկրպագելի ոտքը իյ-

նանք , պաղատի՛նք , ողբանք արտասուա-
լից հառաչանօք , խնդրենք իւր անդառնա-
լի խոստմանը համեմատ՝ որ ըսաւ “ բա-
զում ուրախութիւն լիցի յերկինս քան
միոյ մեղաւորի՝ որ ապաշխարիցէ” : Մենք՝
որ ամենքնիս ալ թէ՛ աշխարհական , թէ՛
եկեղեցական , թէ՛ մեծ և թէ՛ փոքր , թէ՛
արու և թէ՛ էգ , թէ՛ ծեր և թէ՛ տղայ ,
մեղաւոր և մոլորեալ ենք Աստուծոյ ար-
դարութեան ճամբէն , խնդրենք ամեն
մէկէրնիս մեր դէմը գտնուող թաղական
եկեղեցականներէն ու երեսփոխաններէն որ
յառաջիկայ կիրակի օրը համագումար
ներկայ գտնուին սուրբ և անմահ պատա-
րագին , և երբէք չի խնայեն իրենց աշխա-
տութիւնները ՚ի փառս Աստուծոյ . նոյն
Պատարագը Աբէլի և Իսահակայ պատա-
րազներուն նմանցընելու համար՝ ըստ հը-
րամանի առաքելական սուրբ Եկեղեցոյ
Ժողովրդեան ջերմեռանդութիւնը գրգռե-
լու և ամեն մէկ անձ զատ զատ քաջալե-
րելով համագումար ընելու ամենասուրբ
պատարագի արարողութեան ժամանակ ,
և սուրբ խորհուրդը աւելի ահռելի ըլլա-
լուն համար՝ նոյն օրը նոյն թաղին քարո-
զիչը կամ առաջին քահանայն Հայր Աբ-
րահամ ու առաքինական սիրտը խնդրե-
լով Աստուծմէ՛ մատչի անմահական սուրբ

սեղանին՝ որպէս զի իւր պատարագն ալ
 Իսահակայ զօհին նմանելով՝ Աստուած
 ամենաբարին ընդունէ, եւ իւր մարդասի-
 րական եւ անճառելի եւ անսահման նե-
 րողամտութեամբը ներէ մեր մեղքերուն,
 մեր մոլութեանցը և մեր բոլոր Աստուծոյ
 դէմ ըրած հրամանազանցութիւններուն,
 և նոյն աւուր պատարագին չի դիմողը ա-
 ռանցհիւանդութեան պատճառի՝ այսպատ-
 ուածային պատուհասը մեր վրայէն վեր-
 ցընելու համար, գիտցէ՛ք որ պիտի նմանի
 Քրիստոսի առաքելոց մէջ զտնուող Յու-
 դային. որոնք սուրբ Յարութիւնէն ետքը
 մետասան մնացին : Սուրբ Պատարագի
 Տէր ոչր՝ Եայի պաղատանաց ժամանակ՝ նոյն
 եկեղեցւոյ զանգակները և կոչնակները կը օ-
 կին և կրկին հնչեցունելով՝ ամենայն ջեր-
 մեռանդութեամբ և արտասուալից աչօք
 պաղատինք առ աստուած, որ այս անմի-
 աբանութեան, ատելութեան, խռովու-
 թեան, երկպառակութեան, ևն. ևն.
 չար արմատները մեր սրտերէն խլելով՝ իր
 շնորհիւր մեր սիրտերը լուսաւորէ առա-
 քինութեամբ, կատարեալ քրիստոնէու-
 թեամբ և առաքինասէր վարուք զինքը
 սիրել և աշխարհիս ամէն փառքերէն
 աւելի ճանչնալու կարող ըլլանք և յաւի-
 տենական փառաց արժանի. և Քրիստոս

Աստուած որ իւր անհուն մարդասիրութեամբը յերկնէ յերկիր խոնարհեցաւ և ոչ թէ վայրկենական փոքրիկ ճանապարհ մը ըրաւ մեր սիրոյն համար . որ մեզք և յանցանք երբէք չ'ունէր . թէ որ մենք ասոր փոխարէն մեր անիրաւութիւնը վատորկած մեզքիններոգութեամբ պաղատելու համար ծուլութիւն ընելով տուներնէս եկեղեցի երթալը զանց առնենք , ի՞նչպէս կ'ըլլայ մեր վիճակը արդեօք : Այս մտածելով ամենահարկաւոր և ամենաօգտակար պարտք սեպենք նոյն առաւօտը կանուխ սուրբ Եկեղեցի երթալ եւ սուրբ եւ անմահ պատարագին ներկայ գտնուիլ . եւ ահաւոր ու ահռելի խորհրդոյն զէմը եղած ժամանակնիս նախ 'ի կենարար Տեառնէ մերմէ 'ի Յիսուսէ Քրիստոսէ խնդրենք հոգիներնուս եւ սրտերնուս համար Աստուածային շնորհք . որ իւր շնորհիւր բարգաւաճեալ կարողանանք զինքը պաշտել 'ի վայելչութիւն ճշմարիտ բրիստոնէի : Ահա՛ մեզի այս շնորհքը բաւական է . եւ այս շնորհիւր աշխարհիս փուճ եւ ունայն փափաքներէն կրնանք ձեռք քաշել : Երեւելի հարուստներ և հրգօր ամիրայներ , ճարտար սեղանաւորներ եւ համբաւաւոր արքունի պաշտօնատարներ , զուք այս շնորհիւր ձեր ժամա-

Նակաւոր երկրի գանձը երկնից գանձին
հետ կրնանք փոխանակել՝ աղքատները
մխիթարելով, որբերուն եւ տառապեալ-
ներուն օգնելով, եւայլն, եւայլն: Ո՛ր ճար-
տարարհետաւորք եւ վաճառականք ա-
մենայն հասակի. այս սիրովը ձեր գործին
ճարտարութիւնը կրնաք հաւասարել երկ-
նաւոր ճարտարութեան. եւ ձեր նիւթե-
ղէն վաճառքները կրնաք այս սիրովը՝ ան-
նիւթական եւ անկորուսանելի ընել, եւ
ձեր նիւթեղէն վաճառքները չիկորսու-
ելու համար բրած «կո»-ընտաներնուդ չի նը-
մանիր, երբ որ այս սիրովը Աստուածային
տանը «կո»-ընէք: Ո՛ր սպասաւորներ, աշ-
խատաւորներ եւ ծառայներ, գիտցէք՝ որ
այս սիրովը Աստուծմէ առած պարգևնիդ
ձեր աշխարհային տիրոջմէն առածնուդ
չի նմանիր, որովհետեւ Աստուած ամե-
նակարող եւ ամենայն բարեաց Տէր է, եւ
մանաւանդ՝ մեր այս կրօնական պարտա-
կանութիւնները կատարելով անօթի ալ
չենք մնար. ինչպէս որ Դաւիթ միանգա-
մայն մարգարէ եւ թագաւոր ըլլալով
որն որ աշխարհիս ամեն հարստութիւն-
ները փորձած էր, կաղաղակէ, կրճչէ ու
կը պօռայ. «Մանուկ էի եւ ծերացայ եւ
եւ ո՛չ տեսի զարդարն արհամարհեալ և զոր-
դի նորա թէ մուրանայ հաց:» Չեղի ուրիշ

հաստատ վկայութիւն մ'ալ տամ առաքինի մարդոյն անօթի չմնալուն, զորն որ թագաւորաց թագաւորը մեզի կ'ըսէ, « Հայեցարուք ՚ի թրուչունս երկնից՝ զի ոչ վարեն եւ ոչ հնձեն եւ ոչ ժողովեն ՚ի շտեմարանս, և հայրն ձեր երկնաւոր կերակրէ զնոսա. ո՞չ ապաքէն դուք առաւելէք քան զնոսա »: Բսել է որ, աշխարհիս մէջ ապրելու համար՝ չափ մըն ալ կայ, զոր ճանչնալու ենք, այն է Աստուծոյ անհուն ողորմութիւնը: Այս խօսքերէն ծոյլերը չ'ըլլայ որ քաջալերուին, որովհետեւ ծուլութիւնը մահացու մեղք է եւ պատճառ թշուառութեանց: Աստուծմէ խնդրելիքնիս երկրաւոր ինչք չ'ըլլալով միայն Աստուածային ըլլալու է:

Հիմայ, կրօնաւորներ և Աստուծոյ պաշտօնեաներ, դուք մեր վերի խնդրածներէն աւելի ինչ պիտի խնդրէք, գիտէք. Քրիստոսի արեամբը զնեալ հօտը միշտ անարատ պահելու շնորհքը, և գլխաւորապէս ձեր գերբնական պաշտօնը ուրիշ քան չ'է, բայց եթէ Քրիստոսի արժանաւոր փոխանորդներ ըլլալու պատիւը և ահագին ու ահռելի շնորհք ունենալ: Դուք ամեն կերպով մենէ աւելի մեծ, գովելի ու պատուելի էք, թէ որ պատիւնիդ ճանչնաք. գիտէք արդեօք, որքան դողալու եւ զար-

հուրերու պաշտօն է ձեր պաշտօնը: Երևելի թագաւորաց քով գտնուող սպայն կամ սպաւաւորը իր վեհապետին սուրէն ու բարկութենէն կը վախնայ, որն որ միայն մարմնաւոր տանջանքներ տալով կեանքը կրնայ վերջացնել, դուք՝ որ թագաւորաց թագաւորին սպասաւորներն էք, որչափ սարսափելի պատիժ պիտի առնէք, թէ որ անոր հրամանին հակառակ վարուիք, և ինչ սոսկալի գան ու հարուած պիտի ընդունիք. ինչպէս որ աստիճաննիզ մեծ է, պատիժնիզ ալ մեծ պիտի ըլլայ. դուք եթէ ձեր պարտականութիւնները ըստ պատշաճի կատարէք, մի՛ գիտնաք թէ միայն Եստուծմէ կատարեալ փառք կ'առնէք, և այլ նաև ժողովուրդն ալ կը սպարտաւորէք միշտ սիրելու և յարգելու զձեզ և ձեր ամեն մարմնաւոր պիտոյքները ըստ կարգի հոգալու. որովհետև մարդ մը ինչպէս որ իր հայրը սիրելու պարտական է, իր հողեղէն մարմնոյն պատճառը ըլլալուն համար, առաւել ևս դուք որ մեր հողևոր հայրերն էք, որչափ զձեզ սիրել և յարգել կը պարտիմք, երբ որ աստիճաննիզ ու պատիւնիզ ճանչնաք. ինչպէս որ «հողի առաւելէ քան զմարմին» նոյնպէս դուք ալ առաւել սիրելի էք մեզ քան զմարմնաւոր հայրերը. և այս պատ-

ճառաւ ձեր ամենափոքր պակասութիւնները մեծ ցաւ կուտայ մեզի . որովհետեւ ձեր յանցանքը ու անպատուութիւնը ազգին կը վերաբերի և ո՛չ ինչպէս հօր մը պակասութիւնը իր ընտանեացը . այս պատճառաւ կրկին կ'ըսեմ , որ ժողովուրդը չի մոլորեցնելու համար բարի բարքով և առաքինական ընթացքով վարուեցէ՛ք . ինչպէս որ Առաւորիչ Հայրն մեր Վրիգոր և քահանայն Մէլքիսէթեզ . որոնց փառացնալ արժանի ըլլալով՝ առ Աստուած մեզի համար ըրած բարեմազութութիւններն իզ ալ ընդունելի ըլլան . և այսպէս հանգիստ սրբտոմբիդ ու բարեգործութիւններովն իզ մեր հովուապետին քով երթալու և բազմելու ամենացանկալի փառքին արժանի ըլլաք : Երգարև շատ փորձեր էի , որ ձեր պակասութիւնները մեզի համար դառնեն , բայց և այնպէս ծանր ըլլալնին չգիտէի . երբոր այս մահաբեր թոյնը կրօնաւորէ մը ընկալայ օգոստոս 27 ին կիրակի իրիկուն ժամը 12 ին ատենները Խսկիւտարու Հայոց գերեզմանատան մէջ . ուր քահանայ մը արծաթսիրական հողով 100 հազար զուրուշ տալու կարողութիւն ունեցող հայ մը հինգ հազար զուրուշ տալու կարողութիւն ունեցողէն աւելի արտօծութիւն ունի ըսելով կը վճռէր . մոռնալով գլուխ ամենայն

չարեաց արժաթասիրութիւնն ըլլալը . և կրօնաւորի մը շահախնդրական գործոց մէջ խօսելն անգամ անիրաւութիւն ըլլալը . և մանաւանդ իբրև Քրիստոսի փոխանորդ պարծենցող ըլլալուն՝ իր Տիրոջը կամքին բոլորովին հակառակ : Մոռցա՞ր , ո՞ր կրօնաւոր . որ մեր Տէրը Յիսուս Քրիստոս տաճարին մէջ գանձանակին քով կեցած ժամանակը՝ երբոր այն աղքատիկը երկու լումայ ձգեց գանձանակին մէջ , անիկայ Քրիստոսի ամենէն աւելի ընդունելի եղաւ , վասն զի շատերը իրենց աւելորդէն կուտան . բայց ինձի պէս թէ՛ և տկար ես առաքելական և Աստուածային գրքեր կարդալու , գոնէ քու ամեն օրուան կարդացած Աւետարանիդ վճիռները յիշէ : 'Նոյնպէս' օգտատու 30 ին չորեքշաբթի օրը Խասգիւղի շրջակայները տան մը մէջ ծերունի քահանայ մընոյն ազնիւ գերդաստանին մոլար վարդապետութիւններ կը քարոզէր և անիրաւ զրգարաութիւններ կ'ընէր ըսելով թէ սահմանադրութիւնն ու զողները անանկ եղեռնագործ և անհաւատ մարդիկներ են , որ եթէ ազգին գործը անոնց յանձնուի , մէկ մարդու մը երկու կին առնելու հրաման կուտան" . Ա՛վ քահանայ , չ'ե՞ս յիշեր որ ձեր դասին մէջէն գտնուած է կին մը ունեցող մարդը ուրիշ կնոջ կը

հետ երկրորդ անգամ պսակողը շահու հա-
մար, և երբեմն ձեր մէջը գտնուած են ա-
նանկներ՝ որ իրենց շահուն համար և կամ՝
երևելիի մարդու մը հաճելի ըլլալու համար՝
Եստուածային օրենքները և սուրբ եկեղեց-
ւոյ արարողութիւնները պղծեր են : Ասոնք
ամենը և շատ գործերնիդ քաջ գիտենք,
և հայելի պէս մեր աչքին առջևը միշտ
պատրաստ են տեսնուելու, որովհետև «չեք
ինչ ՚ի ծածուկ որ ո՛չ յայտնեսցի և գաղտ-
նի որ ոչ ծանխցի» : Ասիկայ զխոնարով ա-
մեն բան առ վճռոյն համեմատ գործեցէք
բայց և այնպէս կը յարգենք զձեզ, որ ձե-
զի արատ բերողը միանգամայն մեր անձ-
նական թշնամիէն աւելի սեպելով՝ աղ-
զին ալ թշնամի կը սեպենք, վասն զի
դուք ազգին պատիւներն էք, և թէ որ մէկը
յանդգնի (դուք ձեր պատիւը ու աստի-
ճանը ճանչնալով քրիստոնէավայել վար-
քով ապրած ժամանակնիդ,) նախատինք
ընելու ձեզի, ո՛չ թէ զմեզ նախատածի
պէս կարհամարհենք, բայց եթէ մեր եկե-
կեղեցին արհամարհած սեպելով մեր զրիչ-
ները, զօրութիւնը, հոգւով և մամնովնոյն
յանդգնողին գէժ՝ դնելու պատրաստ ենք,
ունիմ՝ աղերս մը ձեզի ուղղելու, թէ որ Ար-
քօնական Ժողովը ձեզի հրամայէ կազաչեմ
(կաղաչեմ) կ'ըսեմ, վասն զի գիտեմ որ ա-

Նիրաւութիւնէ աշխարհականի մը կրօնական մասին հրամայելը ինչպէս որ գիտենք, ձեր այն պարտականութիւնը որ ամեն քահանայ պատարագիչ ըլլալէն առաջ սաղմոսերգութիւն կ'ընէն ու կ'ապաշխարէ, նոյն ապաշխարանացը հետ աւելցրնեն եթէ կը կամին կրօնաւորի մը ձեռնադրութեան արարողութիւնները . ու խորհրդագրերը կարդան սաղմոսերգութեան հետ և ապա սուրբ սեղանին մատչին, ասանկով կը յուսամ որ դուք աւելի կը պարտաւորիք ջերմեռանդ Պատարագ մատուցանել . և Ետուած ամենաբարին ալ աւելի ևս իր շնորհները կը բաշխէ թէ ձեզի և թէ ժողովուրդին : Եսանկով Ետուած ային ձեռնարկութեանց հաւատարիմ կտտարիչ եղողի փառք մըն ալ կ'առնէք Ետուծմէ :

Գանք հիմայ մեր խնդրոյն երկրորդ նըպատակին : Արովհետև մենք Ս. Ակեղեցւոյ հարազատ որդիքը ըլլալու ջանալէն ետ չի կենալով գործադիր ալ պիտի ըլլանք, ուստի նոյն Ս. Ակեղեցւոյ հրամանին հակառակ և միանգամայն Ետուծոյ Սուրբ Տանը իրաւունքը անարդողները պարտաւորուած պիտի ըլլանք անջատելու մեր անարատ մօրմէն Ս. Ակեղեցիէն . և ահա մեր ճշմարիտ քրիստոնէութեան սերը և հաւատարիմ եղբայրսիրութեան և առա-

քինի ազգասիրութեան և միայնգամայն
հպատակութեան ամենահարկաւոր պայ-
մանները և պարտքերը ճանչցող մեր սի-
րելի և առաքինի հայրերը, տէրերը և եղ-
բայրները պիտի քաջալերենք, որ իրենց
այս առաքինութիւնները ունեցած ըլլա-
լու փորձերնին ջանքերնին և ճիգերնին
չի խնայեն այս կէտին մէջ 'ի փառս Աստ-
ուածային մեծութեան և 'ի պայծառու-
թիւն սուրբ անարատ եկեղեցւոյ և հաւա-
սոյ մերոյ . և որովհետեւ մեր բարերար
ինքնակալին առատագութ շնորհները ան-
դադար վայելելովնիս և իւր հայրական
գութը միշտ խնդրելովնիս և անդադար
իւր խնամոցը փափաքող ըլլալնուս այս
մասն ալ կրօնական պարտականութեան
հետ խառնելով ջանանք մեր նպատակը
առաջ տանիլ 'ի բարին . և ահա՛ ձեզի
մէկ փորձագար մը . որ ձեր ամեն կերպ
առաքինութիւնները կարող է փորձելու .
ահա՛ ասով պիտի իմանանք ինչ սրտէ ըլ-
լալնիդ և կրօնքնիդ ու ազգերնիդ ինչաս-
տիճան սիրելնիդ, գիտէք, սիրելինն'ր իմ՝
երբ Մովսէս մարգարէն մորենիին քով կը
մօտենար, ձայն եկաւ մորենիէն “ հան
զկօշիկս քո, զի տեղիս այս սուրբ է” . կը
յիշէք, սիրելիներ, Դաւթի մարգարէ-

Պ Ե Ն Ո Ւ Յ Ո Ւ Մ

Արդարեւ աղերսիս գիրերը յիրաւի չափէն աւելի մեծ են որ տրպագրութիւնն ալ շատ ծանօթ պատճառերը յայտնի է բայց ինչպէս որ ազգօգուտ գործի մը ձեռնամուխ ըլլալու սէրը ու փափաքը մեզի ստիպեցին ամեն կերպ զօհեր ընել 'ի սէր ազգիս որ այս պարագայիս մէջ անգամ երեք բանմը չի խնայեցի . է որովհետեւ դժբաղդարար և ջաւօք սրտի դիտեմ որ Ազգերնուս մէջ ընթերցման փափաքը մինչեւ այսօր՝ լուսաւորեալ ազգերուն նայելով, մեռած է : Ուստի գուշակեցի թէ զերբուն մանր ըլլալէն ալ ընթերցողք ձանձրանալով չեն կտրուար եւ ասոր համար այս տեսակ գրերով ապէլ տուի . աղաչելով որ ընթերցողք կարդան եւ շնորհ ընեն մեր աղերսին խնդիրները կատարելու . որով մենք ալ աւելի քաջալերուելով 'ի սէր եւ 'ի յառաջդիմութիւն ազգիս աղերսնիս շարունակենք մինչեւ որ ազգերնիս շփոթութեանց անդունդին բերնէն հեռանալով՝ իրաւանց եւ արդարութեան դաշտին մէջ ընթանայ . եւ նոյն դաշտին մէջն ալ յառաջդիմութեան հասնելու միջոցները ցուցունելով, ու անկէ ետքն ալ ուրախ սրտիւ եւ երախտագարտ ոգւով միշտ ազգին օգտին համար յօդաւածներ ու յայտարարութիւններ եւ հրատարակութիւններ ընելով :

Մնամ խնդրանացս կատարմանը փափաքող եւ ցանկացող մեծաւ յարգանքը

Կ. Պօլիս
7 Մեպ. 1861

Խմբագիր — Տնօրէն
եւ միանգամայն ձրի հրատարակիչ
Բարսեղ Գեորգեան Երեքեղաբրեանց :
ԼՈՒՍԱՒՈՐԶԱԿԱՆ ՈՒՂԱՓՈՒՄ ՀԱՅ
եւ բնիկ Պօլսեցի

Ընթերցողս վերաբերեալ գործի մը կամ հրատմանի մը եւ կամ բացաւորութեանն ու ազգայնութեանն մը համար՝ զիս օրհանալ ու աստ իս գրել ու իմաստը աւելցնելու եւ յարգանքով կ'ընդունանք 'ի հաւաստիքս . եւ դիտարութեան համար կ'իմացնեմ որ ինքեքցասիրաց ուսումնասիրական ազգօգուտը իմանգարանը Մեծ — Սոր — Խտնի անուան յարկի դրանելով լին Ծ . իրկէն իրենց նախակները կամ օգուտը արտարութեանները : Ինչ անկամը զիս օրհանելու առողջութեան ակ հոն իմացնելն որ որ կամ որ զբնասումնցս քաջած ըլլալու քնորնալովն կ'արեանն քորնել զիս :



